

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for supporting the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
38

Yerevan – 2024

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
38

Ереван – 2024

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

38

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր),
Վահան Տեր-Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե
Թորոսյան, Թեո վան Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան,
Գուրգեն Գասպարյան, Նազենի Ղարիբյան, Արուսյակ Թամրազյան, Հայկ
Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 38, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ինստիտուտ. Երևան, 2024, 352 էջ:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ
PUBLICATIONS
ПУБЛИКАЦИИ

ՀԱՎՈՒՔ ՔՅՈՍԵՅԱՆ*

DOI:10.57155/KVZG8565

ՏԻՐԱՏՈՒՐ ԿԻԼԻԿԵՑՈՒ ՔԱՐՈՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ,
ՈՐ ԱՍԷ «ՏԷՐ, ՍԻՐԵՑԻ ԶՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ ՏԱՆ
ՔՈ ԵՒ ԶՏԵՂԻ ՅԱՐԿԻ ՓԱՌԱՅ ՔՈՅ» ՃԱՌԸ

Բանալի բառեր՝ Մատենագիր, աստվածաբան, ճառեր, բնաբան, տուն, հարկ, մեկնություն, «վերնայարկ», եկեղեցի, աշխարհ, խորան, հայտնաբանություն, երկնային նվիրապետություն:

ԺԴ դարի հայ եկեղեցական մատենագրության ոչ անհայտ դեմքերից մեկն է Տիրատուր Կիլիկեցին († 1350-ական թթ.): Նա եղել է մեծանուն մատենագիր, մանկավարժ, եկեղեցական-քաղաքական գործիչ Եսայի Նեցու († 1338 թ.) արժանավոր աշակերտը: Ուսուցչի նման Տիրատուր վարդապետն իր շատ կարևոր մասնակցությունն է բերել Գլաձորի համալսարանի և իր իսկ հիմնադրած (1338 թ.) Հերմոնի վանքի ուսումնագիտական կյանքին: Նրա գրչին են պատկանում տարաբնույթ ճառեր, որոնք արտացոլում են համալսարանի ուսումնական հարուստ ծրագիրը, դասավանդվող առարկաների բովանդակությունը, տեսական խորությունն ու ընդգրկումը¹: Այդ ճառերն աչքի են ընկնում իրենց մեկնողական ուղղվածությամբ: Մեկնության հիմքում ընկած է երևույթների բացատրության բանասիրական, բառաքննական եղանակը: Բացառություն չէ հրապարակվող ճառը, որ թյուրիմացաբար դուրս է մնացել նրա ճառերը ներկայաց-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, փ.գ.դ., հոդվածը ստանալու օրը՝ 30 հոկտեմբերի, 2024, հոդվածը գրախոսելու օրը՝ 13 նոյեմբերի, 2024:

¹ Այս մասին առհասարակ տե՛ս Լ. Խաչիկյան, «Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական առեմախոսությունները», Գիտական աշխատություններ, Երևանի Համալսարան, 1946, հ. 23, էջ 423-450, վերահրատ. Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Ա, Երևան, 2012, էջ 228-246:

նող հատորից²: «Քարոզ եկեղեցույ, որ ասէ. Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո եւ զտեղի յարկի փառաց քոց» (Սղմ. ԻԵ 8) խորագրով խնդրո առարկա ճառն ունի եկեղեցաբանական բնույթ: Ճառիս բանասիրական քննությունը ի հայտ է բերում գիտական ժառանգորդութեան այն ոգին, որ բնորոշ էր գլաձորյան համալսարանում կենցաղավարող հետազոտական խոհանոցին: Ինչպես նրա մյուս ճառերում³, այստեղ ևս Տիրատուր վարդապետը դիմում է անցյալի գիտահետազոտական փորձառութեանը: Իր խոսքն առավել զորավոր, նպատակամետ դարձնելու համար հեղինակը պատշաճ է նկատում ճառում ընդգրկել առանձին հատվածներ Եսայի Նչեցու «Ի բանն մարգարէական, որ ասէ. Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն սուրբ է, եւ մնայ յաւիտեան» (Սղմ. ԺԸ 9-10) բնաբանով ճառից⁴:

Աչքի առջև ունենալով ուսուցչի՝ Եսայի Նչեցու բացատրությունը⁵՝ հեղինակն իր մեկնությունը սկսում է նախ «սաղմոս» բառի մեկնութեամբ: Այն հունարեն այդպես է անվանվում (ΝΥΛΛΙΔΟΣ), որովհետև «եղանակաւ է ասացեալ զսա մարգարէս»: Եվ երևույթն այդպես է անվանվում պայմանավորված ոչ միայն բառերի եղանակավոր արտաբերման, այլև «ընդ երգսն բախեալ» ծնծղաների ներդաշն ձայնակցման փաստով: Այստեղից հեղինակն անում է գեղագիտական հետևություն. քանզի ձայնեղանակն «աճեցուցէ նոքաւք զհեշտութիւն բանիցն յունկն լսողաց»:

Արդ, այսօրինակ նախագրությունից հետո, ձեռնամուխ լինելով միջնադարում այնքան ընդունված երևույթների խորհրդաբանական բացատրութեանը՝ Տիրատուր վարդապետը բնաբանի «տուն» կամ «յարկ» բառը զետեղում է չորս իմաստային դաշտերի մեջ: Դրանք պարունակում են «տուն» հասկացութեան հետևյալ իմաստները. «Նախ եւ առաջին աշխարհս, երկրորդ՝ ժամուն, որ ի Սողոմոնէ շինեցաւ եւ ի Զարաբաբելէ նորոգեալ զարգարեցաւ ի մարմնանալ Բանին Աստուծոյ, երրորդն՝ եկեղեցի սուրբ... եւ չորրորդն՝ մարդն կենդանի», որ երկրորդ աշխարհ է աշխարհի մեջ: Հեղինակը ծանրանում է այս իմաստներից յուրաքանչյուրի վրա: Նա մասնավոր քննութեան նյութ է դարձնում «զձեւ կերպարանաց աշխարհին իբրեւ զկազմած գեղեցկայարդար եռայարկ շինուածոց»:
Այս շինվածքի «վերնայարկ»-ը հոգևոր իրողությունների տարածքն է, որ

² Տիրատուր Կիլիկեցի, Ճառք, աշխատ. Հ. Քյոսեյանի, Երևան, 2023:

³ Հ. Քյոսեյան, «Մի էջ Տիրատուր վարդապետ Կիլիկեցու աստվածաբանական ժառանգությունից», ԵՊՀ. «Աստվածաբանութեան ֆակուլտետ». Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, 2, 2021, էջ 8:

⁴ Եսայի Նչեցի, Ճառք, աշխատ. Հ. Քյոսեյանի, Երևան, 2024, էջ 62-92:

⁵ Նույն տեղում, էջ 66:

զգայական բնություններից, «իբրեւ վարագուրաւ» քողարկաված է անմարմին էակների՝ հրեշտակների միջոցով: Նրանք «վերնայարկ»-ի Սուրբ Երրորդութեան «աստուածապետական լոյսը» փոխանցում են իմացական ստորին հարթութեան վրա գտնվող մարմնեղեն էակներին, որոնք մատնացույց են անում «ներքին աշխարհն», ուր բնակվում ենք մենք՝ «ամենայն զգայական կենդանիքս»: Նյութականից և հոգևորից կազմված մարդն իբրև «ներքին աշխարհի» բնակիչ, իր հոգևոր բաղադրամասով, «ի ձեռն նմանից» հարաբերվում է բնույթով իրեն մասնակիորեն նման վերին ուղորտների էակներին: Հոգևորով ներթափանցված մարդկային միտքը նյութական իրականության միջոցով, հոգևոր աշխարհընկալմանը բնորոշ վերացարկումով, հարաբերվում է աննյութին, վերերկրայինին: Սա մատչելի է այն ազամորդիներին, որոնք ընթանում են «անբիծ կենաւք»: Ուստի այդպիսի ազամորդիներից մեկը՝ Դավիթ սաղմոսերգուն բացականչում է. «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո»: Այդ երկնավոր տան վայելչութեամբ զմայլվեց Պողոս առաքյալը, որ պարտավորվեց լռել անդենական հրաշալիքների մասին⁶: Այդ երկնավոր տունը նաև աստվածային փառքի հարկաբաժինն է: Հեղինակը նկատում է, թե սա ամենևին էլ քմածին կրկնաբանություն չէ, այլ առարկայորեն «իմացուածս ինչ յայտնաբանէ»: Եվ այս հայտնաբանությունը կամ բացորոշումը կատարվում է նյութական իրականության միջոցով, որ կյանքի է կոչվում «ըստ բնական քննութեան աշխարհիս»: Սակայն աստվածաբան հեղինակի համոզումով, Դավիթ համար բնութեան օրինաչափություններն որքան էլ որ սիրելի լինեին, չէին կարող կատարյալ ճշմարտություն կամ «անպակաս վայելչութիւն» համարվել, այլ միայն «իբրեւ նախակրթութիւն⁷ վերամբարձական, որով յիմանալի խորանին վայելչութիւն վերամբառնայր»: Այսինքն՝ մարգարեի համար տեսանելի բնությունը լոկ միջոց է հասու լինելու անտեսանելի վայելչությանը, «որով իմանամք ճշմարտապէս, թէ որպէս զգալի երկնիւզ հրեշտակացն խորան ի մէնջ է անշրպետեալ, այսպէս եւ յանմարմնոցն իմանալի երկնիւ՝ վերին խորանն, ուր կայ Աթոռ Աստուածութեան»:

«Բազմահանճար խորհրդոյն» թելադրանքով սաղմոսերգուն այդ տունը բնորոշում է որպես «լեանն Աստուծոյ մայր Սիրոնի», «յարկ Աստուծոյ եւ քաղաք

⁶ Տե՛ս Բ Կորնթ. ԺԲ 4:

⁷ Պատշան համարելով պատեհ առիթը՝ Տիրատուր վարդապետն իր բննադատության խոսքն ուղղում է բոլոր նրանց, ովքեր սահմանափակվում էին գիտելիքի այդ նախակրթական մակարդակով. մասնավորաբար այդպիսիք էին ծիսական պայմանականություններով կաշկանդված հրեից «քանձրասիրտ ժողովուրդ»-ը կամ «մոլոր եւ յիմարեալ» հույն իմաստասերները, որոնք բնեցիկն աշխարհի օրենքները, զմայլվեցին նրա զարմանահրաշ օրինաչափություններով, «բայց զԱրարիչն եւ Արուեստատունն ոչ իմացան»:

Տեառն Բարձրելոյ», «գաշտ մայրեաց», «վայր դալարոջ» և «հովիտ արդիւնաբեր»: Այս հատկութիւնները հարաբերվում են ոչ թե հրեից հին տաճարին, ուր կատարվող ծեսը բացառապէս վերաբերում էր մարմնի սրբութեանը և ժամանակավոր մաքրութեանը, այլ եկեղեցուն, որն իր մէջ ներդաշնակում է մարմնավորն ու հոգևորը, քանզի սրանով հինկտակարանյան «ստուերը» լիալովեց էապէս նոր որակով՝ ճշմարտութեամբ: Եկեղեցու այս երկմիասնական հատկութիւնը բնորոշ է մարդուն, որի մէջ նմանապէս մեկտեղված են մարմնավորն ու հոգևորը («Եկեղեցի = Մարդ»): Այսպիսով, խորհրդական նշյալ զուգորդութեամբ, այդ «տուն»-ը կամ «յարկ»-ը նույնական է մի կողմից եկեղեցուն և մյուս կողմից ադամորդուն: Ուստի նրանք իրենց մէջ բովանդակող հոգևորի շնորհիվ հարաբերվում են հավիտենական հոգևորին: Ակներևորեն եկեղեցագործելով բնաբանի միտք բանին՝ հեղինակն Աստծո տուն է համարում եկեղեցին, որ փոխաբերաբար անվանվում է «քաղաք Աստուծոյ»: Այդ քաղաքում գործում են «յուզով արուեստագէտք», որոնք օժտված են «հոգեհանճար առաքինութեամբ», ճարտարապետներ, որոնց դրած հիմքը ոսկուց և մեծագին քարերից է, ինչը և ապահովում է կառուցյի երկարակեցութիւնը: Այդ քաղաքում գտնվում են հոգևոր վաճառականներ, որոնք մարգարիտ են գնում, որով շահում են «զանճառ վայելութիւն», այն է՝ երկնքի արքայութիւնը: Քաղաքի պարիսպները Աստծո օրենքներն ու պատվիրաններն են, իսկ ամուր աշտարակը՝ «զգունդս սրբոց» և գիշերապահ զորքերը՝ «զանմարմին զաւրութիւնս»:

Արդ, շարունակելով և եզրափակելով իր վերլուծական դիտարկումը՝ Տիրատուրը ծանրանում է «Եկեղեցի = Երկինք» նվիրապետական զուգորդութեան վրա: Առաջնորդվելով միջնադարում բացարձակ հեղինակութիւն վայելող Դիոնիսիոս Արիսպագացու աստվածաբանական համակարգով՝ հեղինակը եռահարկ եկեղեցու հարկերից յուրաքանչյուրը հայելացումն է համարում երկնային քահանայապետութեան երեք կարևորագույն հատկութիւններին՝ մաքրագործման, լուսավորութեան և կատարելագործման: Երկնային նվիրապետութեանը համապատասխան այս հատկութիւններից յուրաքանչյուրը բնորոշ է «եւ բնակչաց սորա», ովքեր «աստուածաւանդ կարգաւք զարդարեալ» երկրավոր եկեղեցու մէջ նյութագործում են «երկնայնոցն եկեղեցուց համատեսակ զաստուածատեսակութիւն նոցա մարմնական մասամբք» (Ա Աթոռներ, Սերովբեներ, Քերովբեներ = Եպիսկոպոսապետներ, Եպիսկոպոսներ, Քահանաներ, Բ՝ Տերութիւններ, Զորութիւններ Իշխանութիւններ = Սարկավագներ, Կիսասարկավագներ, Սաղմոսերգուներ, Ք՝ Պետութիւններ, Հրեշտակապետներ, Հրեշտակներ = Կրօնավորներ, Ժողովուրդ, Երախաներ) երեք եռյակներով ներկայացնելով երկնային իննդասյա նվիրապետութեան երկրային այլակեցութիւնն ու գործառույթը:

ԲՆԱԳԻՐ

Ճառը հրատարակվում է, ըստ ՄՄ 2322 (թ. 43ա-49բ)⁸ և ՄՄ 3319 (թ. 34բ-40բ) ձեռագրերի, որոնք երկը պարունակող մեզ հայտնի գրչագրերն են.

Ա = 2322. Ճառերի ժողովածու, **Ժամանակ՝** Ժէ դար: **Քերթ՝** 275: **Պրակ՝** 1×2 + Ա-ԻԳ×12: **Նյութ՝** թուղթ՝ լուսագծերով: **Մեծություն՝** 14×17,5: **Գրություն՝** երկայուն (15, 7×11, 8): **Գիր՝** նուագիր: **Տող՝** 28⁹:

Բ = 3319. Ճառերի ժողովածու, **Ժամանակ՝** 1758 թ.: **Վայր՝** Սուրբ Հովհաննես Մկրտչի վանք (Սպեր), Սուրբ Աստվածածնի վանք (Կարին): **Գրիչ,** սաացող՝ Սարգիս Կարնեցի: **Քերթ՝** 278: **Պրակ՝** 2+Ա-ԻԳ×12: **Նյութ՝** թուղթ, լուսագծերով, լուսադրոշմով, 1 թագ, ներֆնում շեղանկյուն ողկույզ. «A FAUCERE LANGDEDOC. 1748» 2 խոշոր ողկույզ՝ պսակված փոքր թագով, 3 «MAI»: **Մեծություն՝** 21,3×15,3: **Գրություն՝** միասյուն: **Գիր՝** նուագիր: **Տող՝** 29-30¹⁰:

Եսայի Նչեցու «Ի բանն մարգարէական, որ ասէ. Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն սուրբ է, եւ մնայ յաւիտեան» ճառից քաղված հատվածներն ընդգծել ենք թավ տառատեսակով և զետեղել անկյունավոր փակագծերում:

ՔԱՐՈՋ ԵԿԵՂԵՅՒՈՅ, ՈՐ ԱՍԷ «ՏԷՐ, ՍԻՐԵՅԻ ԶՎԱՅԵԼԶՈՒԹԻՒՆ ՏԱՆ ՔՈ ԵՒ ԶՏԵՂԻ ՅԱՐԿԻ ՓԱՌԱՅ ՔՈՅ» (ՄՂՄ. ԻԵ 8)¹¹

Զկատարեալ սէրն Դարթի եւ զմիամտութիւն կամացն, որ առ Աստուած ուսուցանէ մեզ սաղմոսս, եւ զգուշացուցանէ արդարոյն եւ հաւատացելոյն՝ ոչ բնակիլ ընդ շարս (տե՛ս Սղմ. Ե 5, 6, ԻԵ 5): Իսկ ըստ որում անբիծ եւ սուրբ զսիրտն իւր դաւանի, ցուցանի յանմեղոյրեան ասացեալ զսաղմոսս: Եւ այս ոչ եթէ ամենեւին անբիծ եւ մաքուր սրտիւ պարծի գոլ. զի այս ի վեր գտանի քան զմահկանացուացս բնութիւն, այլ յաղագս աննենգ եւ առանց դաւանանութեան կամացն, զոր ունէր առ Սատուղ, ըստ նմանութեան Տեառն իւրոյ առ հրէայսն: Յաղագս այսորիկ եւ // (43բ) զդրոշմն մակագրութեանս «ի կատարած» ասէ, այսինքն՝ յաղթութեան, որ նշանակէ, եթէ¹² խոհական բանին իւրով յաղթեաց ցասմնականին, եւ ոչ հատոյց շար փոխանակ նենգ դաւանա-

⁸ Բնագրում նշել ենք այս ձեռագրի էջերը:
⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. է, կազմեցին Ս. Եղանեան, Յ. Քէօսէեան, Տ. Շահէ քհն. Հայրապետեան, Գ. Բաղալեան..., Երևան, 2012, էջ 925:
¹⁰ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ, կազմեցին Ն. Վարդանեան, Ա. Դիրանեան, Ք. Մինասեան, Մ. Մուրադեան, Ա. Ղազարոսեան, Երևան, 2019, էջ 1335-1342:
¹¹ Ա. Եկեղեցոյ՝ ի բանն. «Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո...»
¹² Բ թէ

նութեան Սատուրայ: Այլ զբարին փոխատրելով ընդ նոր պատուիրանս, որ պէս եւ յայլոր¹³ ասէ, թէ՛ «Հատուցից չար փոխանակ այլոց, անկայց ի ձեռս նեղչաց իմոց» (հմմտ. Սղմ. ՃԼ 5 է 5): Իսկ երկրորդ՝ տեսցոմք, թէ վասն է՛ր սաղմոս անուանէ՛ գերգս իւր: Արդ, «սաղմոս» ասի, ըստ յունականին, զի եղանակաւ է ասացեալ¹⁴ զսա մարգարէս, եւ այս ոչ միայն, որ¹⁵ ըստ արտաբերական ձայնիս, այլ եւ փողս ծնծղայ զոյգ ընդ երգսն բաղխեալս¹⁶, [զի անեցուսցէ նոմաք գնեշտութիւն բանիցն յունկն լսողաց]¹⁷: [Քանզի չիք այլ ինչ, որ կարէ այնպէս վաղվաղակի գարամադրութիւն կամաց մերոց զկնի իւր յեղաշրջել¹⁸]: [Որպէս եւ արտաքիմնն գնրփեասայ վասն զարութեան արհեստին առասպելեն՝ գիտելով, զի զարատր է սա առ ի յեղաշրջումն մտաց: Քանզի սատանայի սովորութիւն է զիւր խորհուրդն ընդ ներքին մարդս խառնել, եւ այնպէս զմիտս մեր որպէս¹⁹ տոռամբ ի գերութիւն վարել: Խառնեաց մարգարէս ընդ հակառակս նորա երգս զձայնեղանակացն եւ նուագոցն զարութիւն ոչ միայն զպատշաճն եւ զդիրին, այլ ընդ դէպն եւ զդժուարինն աւգնական, զի զարութիւն բանիցն յափշտակեցցէ զկամս մեր ի նմանէ, եւ ընդ այնոսիկ ուրախացուսցէ: Քանզի լուեալ զգաղցրութիւն եղանակին, հարկատր է մտացս քննել զզարութիւն բանին, թէ զի՞նչ էր բանն, որ զիս այս եղանակաւ հեշտացոյց, եւ գտանէ, որպէս ասէ²⁰. «Յնծացէք առ Աստուած, աւգնական է մեր, աղաղակեցէք առ Աստուած Յակովբայ²¹» (Սղմ. Չ 2)²²]: Եւ կամ զայս, որ առաջի բանիս մեր եղ զսաղմոս, որ ասէ. «Տէր²³, սիրեցի զվայելչութիւն տան բո»՝ յայնժամ յակամայ²⁴ կամաւք ձգի²⁵ սիրտս մեր առ սէրն Աստուծոյ: Բայց նախ քան զամենայն, եւ ոչ զայս անտեղի է քննել, զի Գ (Յ) են կատարելոցն ընթացք. ծառայականան, որ երկիւղին է, եւ վարձկանան, որ արդարութիւն գործոցն է արդարակ, եւ երրորդ՝ սիրոյն կատարելութիւն:

13 Ա այլոր

14 Ա ասացեալ է

15 Ա որ տողամիջում

16 Բ բախեալ

17 Եսայի Կէցի, Ճառք, էջ 66:

18 Անդ, էջ 66:

19 Ա որպէս տողամիջում

20 Ա չիք որպէս ասէ

21 Բ Յակովբայ

22 Նոյն տեղում, էջ 66:

23 Ա չիք

24 Ա ակամայ

25 Բ ձկտի

Վասն որոյ մարգարէս սիրով միայն ընդարձակի առ Աստուած, զոր գիտելի է մեր այսպէս. [զի Մովսէս ամենայն արինամն գերկիւղն եւ զաստն եւ զսպառնալիսն ազդեաց²⁶] անհնազանդ ոգւոցն, իսկ հնազանդելոցն արինացն՝ զառաքինութեան արդարակս, որ էր պարգեւական երկրին վայելումն:

Բայց սիրոյ նոցա առ Աստուած ոչ եցոյց, եւ ոչ իմացականին հպմամբ կարէին ամբառնալ յիմանալի բնութիւն Աստուծոյ եւ կամ յաննառս պարգեւացն վայելս: // (44ա) [Իսկ երկիւղն եւ կամ մարմնատր բարեաց տենչումն ոչ կարէին զմեզ միայն առ նա վերածել առանց սիրոյն: Որպէս ասէ առաքեալ. «Ես առաւել հանապարհ ցուցանեմ ձեզ քան զամենայն, որ է սիրոյն» (Ա. Կորնթ. ԺԲ 31): Կարեւոր է ապա զայն ուսանիլ, զի մի՛ բռնութեամբ արինացն եւ ի հարկէ, այլ կամատր յաւժարութեամբ առ Աստուած նուանեսցին: Վասն այսորիկ այսմ հանապարհի բարւոյ եւ քաղցրի եղեալ մեզ Դավիթ առաջնորդ, որ ցուցանէ սաղմոսիս եւ զԱստուծոյ ի վերայ մեր զառատութիւն գրոյն եւ զմերն առ նա փափագումն²⁷], ըստ որում ասէ. «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո» եւ այլն: Ոչ²⁸ վասն տանջանաց կամ ակնկալութեան փառաց, այլ սիրեցեալք եղաք. սիրեսցոք զքեզ եւ զվայելչութիւն տան քո, որում յետինն է յոյս փառաց եւ երկիւղ տանջանաց: Սակայն զի տարտամութիւն մտաց մերոց տկարանայ՝ ընթացակից լինիլ պարգութեան իմաստիցն՝ մարմնական արինակաւ յայտնեսցում: Զոր արինակ ի տան իշխանի առ որդիս սիրելիս, եւ առ վարձկանս եւ ի ծառայս է տեսանել զանազանութիւն: Քանզի հլու եւ հպատակ եւ հաւասար գտանին Հար երեմի²⁹ կարգն³⁰, այս է՝ որդիքն, վարձկանն եւ ծառայքն: Սակայն զհնազանդելոցն կամսն որիչ գտանես ի միմեանց: Զի ծառայն ըստ առաջին ախորժակացն, եւ ոչ բնադառնա լինիլն կամի եւ ոչ ի սիրոյ սպասատրել յորդորի, բայց պակուցեալ յերկիւղէ տանջանացն, ամենայն հրամանին պատկառ կայ հնազանդութեամբ: Ապա թէ յայնմանէ անհոգ լիցի՝ ծոյլ եւ հեղզ ի պաշտամանն գտանի: Նաեւ³¹ վարձկանն եւս, որ վասն³² յերկս աշխատութեանցն սակս հանդերձեալ հատուցմանն հզնին: Իսկ որդին իմաստուն գիտելով զգոյք հարն, աներկիւղ ի պատուհասէ, սակայն զպատուիրանս եւ զսէրն ունելով յորդո-

²⁶ Եսայի Նշեցի, ճառք, էջ 66:

²⁷ Ա. փափաքումն | Անդ, էջ 66-67:

²⁸ Բ ՈՐ

²⁹ Ա. երեմ

³⁰ Բ կարգն

³¹ Ա. Իսկ

³² Ա. չիք

րիչ, նախայաժար կամա՛մ գհայրն ցանկայ ուրախ ի գործս իւր առնել: Եւ որչափ նաշակէ զհաղցրութիւն սիրոյ հարն՝ խոնարհութեամբ զհնազանդութիւն ողջունէ, թէպէտ եւ չէ երկիւղ ի միջի, այլ բաղձանք ուրախ առնելոյ գհայրն քաջալերէ գնա եւ մահու յառնել առարկու:

Արդ, զայս կատարելութիւն կարգաց³³ սիրոյ յորդորէ զմեզ Դաւիթ ունել առ Աստուած, զոր եւ ինքն ունէր ոչ միայն առ նա, այլ եւ վայելչութիւն տան նորա եւ յարկաց: Որպէս³⁴ եւ երգէ բանիւս առ Տէր՝ ասելով. «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո» // (44բ) եւ այլն: Բայց նախ քան զամենայն քննելի է մեզ, եթէ քանի՞ տուն է Աստուծոյ³⁵, եւ ո՞ր է «տունս» այս, զոր սիրել դաւանի, զի մի՛ հոմանումաբն մոլորիցիմք: Արդ, չորք են տունք Աստուծոյ, որք յանեղական քանէ նորա հաստատեալ կառուցան: Նախ եւ առաջին աշխարհս, երկրորդ՝ ժամուն, որ ի Սողոմոնէ շինեցաւ, եւ ի Զարաբաբելէ նորոգեալ զարդարեցաւ ի մարմնանալ Բանին Աստուծոյ, երրորդն՝ եկեղեցի սուրբ, որ անշարժ կառուցաւ, եւ չորրորդն՝ մարդն կենդանի՝ աշխարհ երկրորդ ի վերայ աշխարհի³⁶: Եւ զի տուն անուանի աշխարհս եւ մարդս՝ տնտես ի սմա: Եւ դարձեալ զինքն նրազով Աստուածութեան վառեալ զիւր մարմինն եւ ած անել տան իւր (տե՛ս Դուկ. ԺԵ 8)՝ աշխարհի: Եւ Դաւիթ ասէ. «Արարեւ զերկին որպէս խորան, եւ արկեր ի վերայ ջուրց զվերնայարկսն նորա» (Սղմ. ՃԳ 3): Եւ Պաւղոս ասէ. «Ամենայն տուն կազմի յումմէ կազմի, իսկ որ զամենայն արար, Աստուած է» (Եբր. Գ 4): Եւ Աստուածաբան անտարանիչն Յոհաննէս ասէ. «Բացաւ տանարն Աստուծոյ յերկինս» (Յայտ. ԺԵ 5): Եւ աշխարհ է, ըստ Պղատանի, յերկնէ եւ յերկրէ, ի հրեշտակաց եւ ի մարդկանէ³⁷: Իսկ զերկրորդն, որ է խորանն Մովսէսի, նախ սոյն ինքն մարգարէս յայլուր երբեմն տուն անուանէ ասելով. «Մտից ի տուն քո պատարագամ եւ տաց [քեզ զովստս իմ]» (Սղմ. ԿԵ 13): Եւ Տէրն առ փարիսեցիսն ասէր վասն Դաւթի, թէ՛ «Զի՞ արդ եմուտ ի տուն Տեառն եւ զհացն զառաջատուրութեան³⁸ եկեր» (Դուկ. Զ 4): Եւ դարձեալ ասէ Դաւիթ. «Թագաւոր զաւրութեանց սիրելոյ զեղեցկու-

³³ Բ յարկաց

³⁴ Բ որ

³⁵ Բ չիք բայց նախ քան... Աստուծոյ

³⁶ Այս միտքն արձագանքն է Հերմես Եռամեծի այն խտացումին, թէ «է փոքրիկ աշխարհ մարդ». տե՛ս «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք», աշխատ.՝ ակադ. Հակոբ Մանանդյանի, ԲՄ, № 3, 1956, էջ 299 [1]:

³⁷ Հմմտ. «Արդ, աշխարհս է բաղկացութիւն յերկնէ եւ յերկրէ եւ որ ի մէջ սցունց պար անեալ են զմիմեանց բնութիւնք...», տե՛ս «Արիստոտէլի յաղագս աշխարհի», Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 604:

³⁸ Բ առաջատուրութեան

թին տան քո» (Սղմ. ԿԵ 13): Եւ ի գիրս Թագաւորութեան ասէ, թէ՛ «Հեղի փահանայն նստէր արթոռով առ դրանն տանարին Տեանն» (Ա. Թագ. Ա 9), «Յամին չորեքհարիւրերորդի հինգերորդի ելանելոցն որդոցն Իսրայելի յերկրէն Եգիպտացոց շինեաց Սողոմոն գտուն Տեանն» (Գ. Թագ. 2 1): Եւ յաղագս վերջին տանն ասէ Աստուած առ Եզեկիէլ. «Որդի մարդոյ, նկարեցես գտունդ եւ զպատրաստութիւնն³⁹ իւր» (Եզեկ. ԽԳ 11): Եւ յայլուր դարձեալ ասէ. «Շուրջ շրջանակաւ տան Քերովբէք եւ արմաւենիք» (Եզեկ. Խ 16): Իսկ զերրորդ տունն, որ է եկեղեցի, տուն անուանէ մարգարէն, եւ ասէ. «Յատուս յետինս յայտնի լեանն Տեանն եւ տուն Աստուծոյ ի վերայ գլխոց լեանց» (Միք. Գ 1): Եւ Դավիթ երգէ. «Ի մէջ Սիւանի տան քում վայել է սրբութիւն, Տէր, ընդ երկայն ատուս» (Սղմ. ՂԵ 5): Եւ թէ՛ «Տնկեալք եղիցին ի տան եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեցին» (Սղմ. ՂԱ 4): Եւ փողն Տարսամացի գոչէ. «Տուն Տեանն ոչ է ձեզ տեղի հաց ուտելոյ» (Ա. Կորնթ. ԺԱ 20): Եւ Տէրն արարեալ խարազան չուանեալ, եւ եհան զամենեսեան ի տանարէն: Ասէ. «Տուն // (45ա) իմ տուն աղաւթից կոչեցի, եւ դոմ արարիք զգա այրս աւագակաց» (Յովն. Բ 15, 17): Եւ դարձեալ ասէ. «Ո՛չ գիտէք, եթէ ի տան Հար իմոյ պարտ է ինձ լինել» (Ղուկ. Բ 49): Իսկ չորրորդն, որ է մարդն, յայտնապէս ուսանիմք ի մարգարէնն տուն անուանեալ: Ասէ. «Իոմ տանար Աստուծոյ կենդանոյ էք, եւ հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ» (Բ Կորնթ. 2 16): Որպէս եւ ասաց Աստուած, թէ՛ «Գնացից ի նոսա, եւ բնակեցայց ի նոսա, եւ եղեց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ⁴⁰»: Նմանապէս եւ Պաւղոս ասէ, թէ՛ «Յորոյ տունն մեք իսկ եմք» (Եբր. Գ 6):

Արդ, որովհետեւ հաստատարիմ եղել մեզ բաժանումն փոխից աստուածային տանցս, նոյնպէս եւ անուանադրութիւն աստուածայնոց բանիցն: Բեր աստանոր եւ զտեսակ կերպարանց նոցա ցուցցումք: Արդ, զձեւ կերպարանաց աշխարհին իբրեւ զկազմած գեղեցկայարդար եռայարկ շինուածոց նմանեցուցանէր Դավիթ՝ ասելով. «Զգեաց զերկինս որպէս խորան, զվերնայարկ» (Սղմ. ՃԳ 2): Արդ, սա վերին յարկ զիմանալեաց աշխարհն կոչէ, զոր եւ⁴¹ իբրեւ վարագուրաւ երկնային գնդին առագաստեալ է եւ անջրպետեալ ի զգայական բնութեանցս, լի եւ անթերի, անմահ եւ անմարմին կենդանեալ, զոր հողմն եւ հուր եւ հոգիք հարկաւոր՝ կարգեալք ի սպասատրութիւն Աստուծոյ՝ անուանեն Գիրք (տե՛ս Եբր. Ա 14): Ամենեւին սուրբք եւ զուարթումք կարգեալք

³⁹ Ա. զպատրաստութիւնն

⁴⁰ Բ ժողովուրդք

⁴¹ Բ չիք

առ դրունս երկնատր Թագաւորին: Յերիս երբեակ ֆահանայապետութիւնս որոշեալ, մաքրին եւ լուսատրին եւ կատարելագործին, ըստ վայելչութեան նոցա կարգաց, եւ գերազանցեալ ըստ թոյլ նոցայն ֆանակութիւն, ըստ տեսլեանն Դանիէլի, որ «հազարս հազարաց, ասէ, եւ բիրս բիրուց» (Դան. է 10): Իսկ սահման բնութեան նոցա՝ էութիւն ինքնակատար, անմարմին, եւ այլ՝ լոյս թափանցիկ, հուր անկիզանող, հողմ անվայրափակ: Իսկ գերագոյն ֆան զնոսա է աստուածպետականն լոյս, որ է Ինքն՝ Սուրբ Երրորդութիւն՝ անջրպետեալ եւ գերամբարձեալ յեղականացս բնութեանց, զոր Պապոս ներքին կողմն վարագորին կոչէ՝ ասելով. «Յոյսն մեր եմուտ ի ներքին կողմն վարագորին» (հմմտ. Եբր. 2 19): Եւ դարձեալ ասէ. «Որ ելն ի վերոյ ֆան զամենայն երկինս, զի լցցէ զամենայն» (Եփես. Դ 10): Որով իմանամք նշմարտապէս, թէ որպէս զգալի երկնիդ հրեշտակացն խորան ի մէնջ է անջրպետեալ, այսպէս եւ յանմարմնոցն իմանալի երկնի՝ վերին խորանն, ուր կայ Աթոռ⁴² Աստուածութեան: Իսկ ստորին յարկն է ներքին աշխարհն, // (45բ) յորում⁴³ մեք ամենայն զգայական կենդանիքս եմք բնակեալ՝ ստեղծեալք յԱրարչն կարատ բնութեան կերակրեալք ի նմանէ եւ դարմանեալք ըստ մարմնոյ մարմնական պիտոյիք եւ ըստ հոգոյ՝ բանի եւ իմաստութեամբ: Քանզի որպէս եւ⁴⁴ ստեղծաք ի նմանէ կրկին էութեամբ, այսինքն՝ բանական եւ անբան, մահկանացու եւ անմահ, տէր եւ իշխան ստորնայնոցն, եւ ընդ իշխանութեամբ վերնոցն՝ տեսող եւ գիտող իմանալի եւ զգալի արարածոց ի ձեռն կրկին կազմած բնութեան: Քանզի եւ ըստ շափոյ եւ նմանութեան նիւթական եւ զգալի գոյիցս ընկալաւ եւ մարդն զկազմութիւն զգայական բնութեան, որպէս զի նմանեանն զնմանն գիտասցէ: Այս է՝ ի ձեռն երեսացն զգոյսն եւ զլոյսն, որ մասն եւ խուզումն է հրոյն՝ ի ձեռն մաքրութեան համատեսակ տեսարանացն: Իսկ ունկամբն՝ զձայն, որ աւոյլ է ծնունդ, յորումն արտաբուստ մտանէ ի մարդն ամենայն տեսակ խաւսից եւ բանից: Իսկ հոտոտելիք՝ գործիք եւ ընդունակք հոտոց եւ հիւթից եւ ամենայն գոլոշից, որ ի գիւնութենէ ջուրց գոյանայ յամենայն արմատս, ի ծաղիկս, ի պտուղս, ի տերեւս, որ ճաշակելեամբ ընդունի մարդ զհամադամս ամենայն նիւթից եւ համոց: Եւ ի ձեռն ֆմաց՝ զբոլոր կերակրոց ճաշակս: Այսպէս եւ շաւշափելեամբ է զխոշորութիւն եւ զոլորկութիւն⁴⁵, զխտութիւն եւ զանգայտութիւն, զջերմութիւն եւ զցրտութիւն ամենայն գոյիցս: Եւ այսպէս ի ձեռն նմանից զնմանն գիտելով, որպէս

⁴² Ա. արթոնք

⁴³ Ա. ուր

⁴⁴ Բ. չէք եւ

⁴⁵ Բ. զշարկութիւն (*)

ասաց, զոր դրունք բնութեանս կոչեցին Գիրք եւ մուտ ամենայն իմաստից ի հրապարակս մտացն, ըստ իշխան եւ թագաւոր բնութեանս մերոյ: Միտք առեալ զգիտութիւն էիցս, ի ձեռն սոցա ամբառնայ նոքաւ յանմարմնոցն յաշխարհ եւ ի նոցայն տեսութիւն, ըստ բնական բնութեան աշխարհիս իմաստնանայ, մանաւանդ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ամենատես գիտութեան, ուստի ամենայն արհեստ եւ մակացութիւն յարմարեալ կազմի եւ լուսաւոր խորհուրդ, որոյ լուսով⁴⁶ գերամբարձեալ մարգարէս տեսանէ զվերնայարկ տանն Աստուծոյ, ընդ որ սխարացեալ հիանայ եւ հարցանէ զԱստուած ասելով. «Տէր, ո՞վ կացցէ ի խորանի բով, կամ ո՞վ բնակէ ի լեառնոյ յափտենական» (Սղմ. ԺԴ 1): Եւ լսէ պատասխանի ի Տեառնէ. առաջինն՝ որ գնայ անբիծ կենաւ՝ եւ երկրորդն՝ որ ունի կատարեալ զգործս արդարութեան // (46ա), երրորդ՝ խաւսի զճշմարտութիւն առ ընկերս եւ առ աշակերտեալսն, չորրորդ՝ ոչ զոք նենգել լեզուս եւ ոչ առնել շար ումեք գործով, հինգերորդ՝ զվարս այնպէս ուղղել, որ անզգամ նախատիւնս ի մերձաւորէն ոչ ընկալցի: Եւ ի վերայ այսոցիկ վեցերորդն՝ ոչ տալ տոկոսեալ գարծաթ եւ ոչ առնուլ յիրաւունս դատաստանի կաշառս, ի ձեռն որոց բնակէ մնայ անսասանելի ի վայելչութեան տանն, յոր զարթուցեալ մարգարէս, ներգործէ ի վերայ այլոց բարեացն, զոր ունէր, եւ զայսոսիկ գլխատրեալ առաքիւնութիւնք յաղագս սիրոյ եւ վայելուչ տանն բնակութեան:

Զոր եւ յերգս առեալ պարէ ասելով. «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան⁴⁷ քո»։ վասն զի տեսի ի դմա փոխանակ հողեղէն յարկացս զանձեռագործ խորանոց, եւ փոխանակ անհարթ բերմանց կենցաղոյս զամենայնի կարգաւորն եւ զանփոփոխականն, եւ փոխանակ ժամանակէիս՝ զմշտնջենաւորն եւ զիմաստագործ վայրն, որ զարդարեալ է աննառելի փառաւ Աստուածութեան, որոյ ճարտարապետ եւ արարիչ Աստուած է: Առ որ հիացման եղեալ, ջանայր նախ քան զժամանակն ելից անդ լինիլ, ըստ որում եւ յայլուր ասէր. «Ծարափ է անձն իմ առ քեզ [Աստուած հօգաւ]» (Սղմ. ԽԱ 3): Եւ զժամանակն անջրպետութեան պանդխտութեամբ իւր վարկանէր, եւ ողբայր՝ ասելով. «Վա՛յ ինձ, զի պանդխտութիւն իմ ընդ երկարեցաւ» (Սղմ. ՃԺԹ 5): Յայս⁴⁸ վայելուչ տանս տեսութիւն եւ Պաւղոս երբեմն յափշտակեցաւ, յորմէ ի հիացման եղեալ ասէ. «Լուայ զբանս աննառս, զոր ոչ է պարտ ումեք խաւսիլ» (Բ Կորնթ. ԺԲ 4):

⁴⁶ Բ եւ լուսաւորի խորհրդաւոր լուսովն, յորմէ *ի/ս* լուսաւոր խորհուրդ... որոյ լուսովն

⁴⁷ Բ ի տան

⁴⁸ Բ զայս

Իսկ յաւելուած բանիս, որ ասէ. «Եւ զտեղի յարկի փառաց բոց», ոչ վայրապար ինչ կրկնաբանութիւն է, այլ իմացուացս ինչ յայտնաբանէ: Քանզի եռայարկ ուստ գծել աշխարհիս. ներքին՝ զգայական աշխարհս, որ մահկանացուացս է վայր եւ տեղի բնակութեան, եւ միջնայարկ՝ զիմանալեացն աշխարհ, որ անմահիցն է տեղի բնակութեան, եւ անջրպետ եւ վարագոյր է ի մէջ սոցա հրեղէն երկինն եւ հաստատութիւնդ: Իսկ վերնայարկ եւ առաջին երկինն, որ կայ փառք անպարագրելի Սուրբ Երրորդութեան՝ անջրպետեալ իմանալի վարագուրաւ ի հրեշտակական վայրէն, զոր այժմ մարգարէս «տեղի յարկի փառաց» (Սղմ. ԻԵ 8) անուանէ, եւ Պաղոս՝ «ներքին // (46բ) կողմն վարագուրին» (Եբր. Զ 19), եւ Մովսէս՝ «երկնից երկինն» (Բ Օր. Ժ 14), յորոց արինակ եւ նմանութիւն ձեւացուցեալ կազմեաց ի հնումն զվրան ժամուն եւ ի նմա՝ զՍուրբն սրբոցն, որ եղաւ տապանակ Վկայութեան, զոր երկրորդ տուն անուանեցաք: Քանզի նմանութիւն բոլոր աշխարհիս կանգնեցաւ խորանն, ըստ որում ասէր, որ խասէրն ի նմա տեսեալ. «Արացես, ըստ արինակին, որ ցուցաւ⁴⁹ քեզ ի լերինն» (Ելք ԻԶ 30): Եւ արդ, որպէս ուսանիմք. ահա, զի եռայարկեան յարդարեցաւ շինուած խորանին եւ Սրբութիւն սրբոցն, որ կայր արկղն կտակարանացն, հաստատեալ բերէր յինքեան, որպէս ասացաւ, զարինակ վերին երկնին, որ վայրն փառաց լուսատրեալ Սուրբ Երրորդութեան կոշիւր, որ աշտանակն էր եւ սեղանն խնկոց, յայտնագոյն տպատրէր զհաստատութիւնդ, որ լուսատրեղ եմ, որ ի վերոյ քան զնա հրեշտակացն վայր: Իսկ արտաքոյ երկրորդ վարագուրին, որ սեղան ողջակիզացն էր, ցոյց եւ արինակ աշխարհիս եւ լուսնոյս ի խոնարհ: Քանզի ի վերայ այնմ սեղանոյ անբան եւ զգայական կենդանեացն մարմինմ մատուցեալ լինէին յողջակէզս:

Որպէս եւ երկիրս զգալի կենդանեացս է տեղի եւ վայր բնակութեան, իբրեւ սեղան ամենալի յԱստուծոյ կազմեալ: Արդ, իբրեւ ետես հոգւովն, եւ իմացաւ զսա պատկեր եւ նմանութիւն երկնից եւ բոլոր աշխարհիս եղեալ, հիանայ ընդ վայելչութիւն սորին, որ յԱստուծոյ հրամայեցաւ նմանութիւն իւր գերահրաշ արուեստին, սիրէր միշտ եւ մաղթէր կալ եւ մնալ ի սմա: Որպէս ասէր. «Բնակիլ ինձ ի տան Տեառն ընդ երկայն ատուս» (Սղմ. ԻԲ 5), եւ թէ՛ «Շուրջ⁵⁰ եղէց եւ մատուցից ի խորանի նորա պատարագ արհնութեան» (Սղմ. ԻԶ 6): Եւ զի սիրէր զսա Դաւիթ ոչ իբր զնշմարտութիւն ինչ կամ կատարեալ եւ անպական վայելչութիւն, այլ իբրեւ նախակրթութիւն վերամբարձական, որով յիմանալի խորանին վայելչութիւն վերամբառնայր: Որպէս եւ երեւելի կար-

⁴⁹ Բ ցուցաւ

⁵⁰ Բ շուրջ շուրջ

գաւոր եւ ի գեղեցիկ տեսութենէ աշխարհիս զաներեւոյթն կատարէր, սոյնպէս եւ ի սորին գեղեցկադիր յարմարութեանց իմաստասիրէր զաներեւոյթն, եւ լնոյր զիղձս բաղձանաց ի սմա, յորմէ վայելմանէ ի բանձրութենէ մարմնոյն արգելեալ լինէր առ ժամանակ մի:

Այլ եւ առ ժամանակեայ մաքրութիւն եւ խորհրդածութիւն արինացն նանապարհ եւ մուտ լինէր նմա // (47ա), առ⁵¹ որում ցանկայր, ըստ թանձրասիրտ ժողովրդեանն հրէից, որով ինքն ամբաստանէ ասելով. «Որդիք մարդկան, մինչեւ յէ՛րբ էք խստասիրտք, ընդէ՛ր սիրէք զանձրութիւն եւ խնդրէք զստութիւն» (Սղմ. Գ 3): Կամ մոլար եւ յիմարեալ իմաստնոցն յունաց, որք գաշխարհս քննեցին եւ ընդ կարգ յարմարութեանցն հիացան, բայց զԱրարիչն եւ զԱրուեստաւորն ոչ իմացան: Բայց ոչ այնպէս թէ եւ ասէ. «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան եւ զտեղի փառաց»: Մի⁵² կարծէր, թէ կատարելապէս զայսմանէ ասէ, այդ զայն, առ որում սովաւ ամբառնայր: Քանզի տանարն չէր շինեալ եւ խորանն այն ինչ հնացեալ էր, այլ զայն տունն, զոր նախ կանխեալ ասացաք, որ փառք Աստուածութեան է հանգուցեալ, որ սեղանն է եւ ձայնք արհնութեանցն եւ անհաս սփանչելիք: Զայն վայելչութիւն տան խոստովանի սա սիրել, որ այսոքիկ են փառաւորութիւնք, որ Քահանայապետն մեր Յիսուս մտեալ եղել (հմմտ. Եբր. 2 20, նաև՝ Գ 1, Գ 14), մեզ նորին դռտն եւ նանապարհ: Արդ, այնչափ ոչ կարէ սիրել զայն տունն⁵³ հոգի, մինչդեռ զերեւելիսն նշմարիտ վարկանի: Իսկ ապա եթէ ի սոցա ունայնութենէն գիտութեամբն արտաքս վազել չիք ի զոփալոյ սիրոյ դադարիլ առ ի վերին տանն ըղձիցն տեսութեանց որպէս սա պաշտի ասելով. «Տէր, սիրեցի զվայելչութիւն»:

Եւ արդ, զայսոսիկ ուսեալք, եկեցցոք այսուհետեւ ի գլովսն երրորդ, եւ ելցոք ի տունն բարձրագոյն, եւ ի խորհուրդն կատարեալ: Որպէս ոմն տեսանող յորդորէ զմեզ ընդ իւր ելանել. «Եկայք, ելցոք ի լեառն Տեառն եւ ի տուն Աստուծոյ Յակոբայ» (Ես. Բ 3): Ընդ որս հիացեալ Դաւիթ անճառելի տեսլեամբ փարի, եւ սակս բազմահանճար խորհրդոյն, երբեմն «լեառն Աստուծոյ մայր Սիոն» (հմմտ. Սղմ. Կէ 16) զսա կոչէ, եւ այլուր՝ «յարկ Աստուծոյ եւ քաղաք Տեառն Բարձրելոյ» (հմմտ. Սղմ. Խե 5) վերաձայնէ, եւ երբեմն «դաշտ մայրեաց» եւ «վայր դալարոջ», եւ «հովիտ արդիւնաբեր» զսա առակէ (տե՛ս Սղմ. ՃԼԱ 6, ԻԲ 2): Նոյնպէս եւ այժմ տուն Տեառն եւ տեղի անտանելոյն երկնի, ի յերգս առեալ պատմէ ասելով. «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո»: Բայց գիտել արժան է, զի «զվայելչութիւն» ասելով զնորս յաւել, զի գե-

⁵¹ Բ չ/բ առ

⁵² Բ Զի

⁵³ Ա զայն տուն սիրել

ղեցկացեալ է ամենայնի՝ խառնելով նորն ընդ հնոյն եւ իմանալին՝ ընդ զգալոյն: Զի յարկն առաջին մարմնական եւ զգալի յարինուածով միայն ընկալաւ զկատարումն: // (47բ) եւ ուր նմա մատչէին անասնոցն ջոկփ եւ անբանիցն հեղմունք արեանց, որ ոչ կարէին ընդ միտս կատարել, ըստ առաքելոյ, այլ միայն ըստ մարմնոյ սրբութիւն եւ առ ժամանակեայ մաքրութիւն (տե՛ս Եբր. Թ 19-22, Ժ 4):

Իսկ նորս եկեղեցի կատարեալ եւ լի գոլով ամենայն խորհրդածութեամբ, որպէս ասացաւ: Զի ի սմա լցաւ ստուերն հշմարտութեամբ եւ մարմինն՝ հոգւով: Զի որպէս գմարդն, որ ի կերպարանս Աստուծոյ ստեղծաւ, եւ դրախտն աստուածատունկ, յոր եղաւ՝ կրկին ունելով զբաղկացութիւն յիմանալոյ ասեմ եւ ի զգալոյ կազմեալ: Քանզի եղեմականն վայր անմահութեան գոլով տեղի եւ անապական եւ անծորելի ունելով պտուղ եւ անստուեր ունելով զհառագայթ լուսոյն, սակայն թանձր գոլով եւ երկնային վայր ի վերայ բարձրագոյն լերին հաստատեալ: Սոյնպէս եւ մարդոյս կազմութիւն ի հոգւոյ իմանալոյ եւ ի մարմնոյ զգալոյ գեղեցիկ հաստատեցաւ եւ զարմացման արժանի: Զի մարմնովն անթերի բերելով յինքեան զամենայն զգայական եւ զգոյնդէն արարածս, իսկ հոգւովն զիմանալի բնութիւն, որ եւ հիացումն շարժեաց զանմարմին էութիւնս: Այսպէս եւ տե՛ս գայս զաստուածային տունս յարինուածս, զի բերելով յինքն զաստուածակազմ արարածոցս եւ զհնոյն ամենայն յարինուածս⁵⁴, խառնեալ աստուածայնոյն հաննարով, զի միջոց է վերնոյն եկեղեցւոյ եւ ստորնայնոյս՝ զերկոսին բերելով յինքն: Ըստ որում առաւելեալ ի սէր եւ ի հիացումն շարժէ զմարգարէս: Որպէս ասէ. «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան բո»: Եւ գայս ոչ ի դէմս մարդոյ, այլ ի դէմս Աստուծոյ դաւանի, որ գիտողն է ամենայնի, եւ որ լինելոցն է⁵⁵ առ յապա, նմա միայն էր տեսանել, եւ որոց նոյն յայտնէր: Եւ արդ, այսոմիկ այսպէս որպէս ասացաւ:

Եկեսցո՛ւմ նախ եւ ասացո՛ւմ, թէ վասն է՞ր տուն Աստուծոյ եկեղեցի կոչեցաւ, եւ երկրորդ, զի մի եւ նոյն գոլով, վասն է՞ր ի զանազան անուանս եւ յիրս զաղափարի, եւ երրորդ՝ ասացո՛ւմ զի՞արդ համակարգ է եւ նման երկնայնոցն մերս եկեղեցի: Եկեսցո՛ւմ յառաջին⁵⁶ գլուխն եւ ասացո՛ւմ՝ զի՞նչ նշանակէ տուն Աստուծոյ զեկեղեցի կոչել: Եւ նախ զիտել արժան է, զի եկեղեցի անուն տիրապէս ի վերայ ժողովրդեանն առնու քան ի տունն, ըստ այնմ, զոր ասաց Աստուած առ // (48ա) Մովսէս. «Եկեղեցացոյ ինձ զժողովուրդն», այ-

⁵⁴ Թ չ/բ զի բերելով յինքն... յարինուածս

⁵⁵ Ա, էր

⁵⁶ Թ առաջին

սինքն՝ ժողովեա, եւ գիր ժողովողին «եկեղեսիաստէս»⁵⁷ կոչի, որ է ժողովող, ապա, ըստ պարզ տեսութեան ժողովողին, մարդիկս եւ ոչ եթէ տուննս: Բայց սա հոմանունաբար սոյնպէս⁵⁸ կոչի եկեղեցի իբր ժողովարան, նաեւ՝ ժողով, իբր մի հոգի ընկալան ի շնորհացն Աստուծոյ տունս եւ մարդիկս: Եւ անձնատրեցաւ եւ սա զարութեամբ Հոգւոյն Աստուծոյ ի ձեռն արհնութեան հաւասար նոցա եւ զմի հոգի ունելով մի անուամբ կոչել տունս եւ բնակչացն վայելուչ էր: Զոր եւ ուսուցանէ մեզ պատմութիւն Գործոց առաքելոցն հաւանաբար, թէ յաւուրն Պենտէկոստէին նախ զտունն ելից, յորում առաքեալն նստէին: Եւ ապա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ, նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա: Զառ ապա խորհուրդն ազդելով սոցայ, զի ամենայն եկեղեցի նախ ինքն ընդունի զՀոգին Աստուծոյ, եւ ապա զմեզ ծնանի աւագանին արգանդով հոգեպէս: Եւ անեցուցեալ վարդապետական ստեամբ ի զանազան վիճակս աշտինանաց յետ կատարման հոգետր հասակին վիճակէ զոմանս:

Իսկ զորս ոչ առ սոյն զարեւն նոքամբ հովուէ, եւ ընդ յարկաւ իւրով միշտ ամրափակեալ պարսպէ: Ուրեմն ապա մի մարմին են յանշնչական⁵⁹ յարձանաց տանարս կանգնեալ: Եւ որդիքն առ ի սմանէ ծնեալք միով հոգով կենդանացեալք: Ուստի եւ Գիրք սուրբք եւ արհնութիւնք երգոց եղանակապէս⁶⁰, որպէս ընդ մի դէմս անձին խաւսին ընդ նոսա զուրախարար եւ զաւետեաց հնչմունս: Սակայն մեզ պարտ է իմանալ, եթէ առ մեզ են ամենայն խորհրդածութիւնք բարբառոցն, որք ի գիրկս նորա սնեալ իւրախանամք ի Քրիստոս Փետայ նորին: Զայս եւ առաքեալ գրեաց. «Յորժամ եկեսցէ եկեղեցին ամենայն ի մի վայր՝ ոչ է տուն Տեառն ձեզ տեղի հաց ուտելոյ» (Ա. Կորնթ. ԺԱ. 20): Եւ Տէրն առ Պետրոս ասէ. «Ի վերայ քո շինեցից զեկեղեցի իմ» (Մարք. ԺԳ. 18)՝ զուղիղ դասնութիւն հետեւեցուցանելով՝ զքրիստոնէից ժողովս նշանակեալ⁶¹: Եւ այսոքիկ այսպէս:

Բեր ըստ խոստմանն մերում եկեսցուք եւ ասասցուք, թէ վասն է՛ր ի զանագան անուանս եւ յիրս գաղափարի եկեղեցի «լեառն» ասի. Վասն անուանելի զարութեան եւ բարձրագոյն խորհրդոյն, ըստ բանին Տեառն, որ առ Պետրոս, թէ՛ «Իրունք դժոխից զնա մի՛ յաղթահարեսցեն» (Մարք. ԺԳ. 18) // (48բ): Եւ յայլուր Պաղոս գրէ. «Մերձեցեալ էք ի յերկինս յեկեղեցիս անդրան-

⁵⁷ Բ եկեղեսիաստէս

⁵⁸ Ա սահման անուանաբար սոցա *ի/ի* սա հոմանունաբար սոյնպէս

⁵⁹ Ա անշնչական

⁶⁰ Ա եղականապէս

⁶¹ Բ նշանակելով

կաց, եւ յոգիս արդարոց կատարելոց եւ ի միջնորդ նորոյ ուխտիս Յիսուս» (Եբր. ԺԲ 23):

Այլ եւ «սուրբ եւ պարարտ» (Սղմ. Կէ 16) անուանէ վասն սրբութեան եւ զանազան աշտիճանացն, յոր բարձրանան ամենայն ի նմա: Իսկ եւ դարձեալ եւ ի Սիւան յորջորջի, որ թարգմանի «դիտանոց եւ պատուար»⁶²: Զի ի սմա բարձրացեալ դէտն ամենահայեաց, առ որս ասէր Աստուած. «Որդի մարդոյ, դէտ կացուցի զեզ ի վերայ ժողովրդեանդ» (Եզեկ. Գ 17): Քանզի սոքա բարձրացեալ յիմաստ գիտութեան հոգեւոր հանճարոյն յայտնի հայեցուածով հային յերկնից արհայութեան եւ անճառ բարեացն խոստմունքն⁶³. նաեւ՝ յերկրային անհաստատ վայրս եւ յամբոյսականն բերմունս: Եւ տան պատուէրս⁶⁴ կենաց մարդկան, թէ պարտ է փախչել աստուստ զվաղագոյն փախուստն, եւ արհամարհել զանհաստատ սէրս ստորնայնոցս եւ ընդ մշտնջենատրին կապիլ անփակտելի⁶⁵ սիրով: Այլ եւ ոմանք տեղի սգոյ զսա թարգմանեցին, զի երանելիքն ի Տեառնէ սգաւորք ի սմա կալով (տե՛ս Մտթ. Ե 4), նշմարիտ եւ ջերմեռանդ սրտի ողբալով լուսնան զյառաջագոյն յանցանսն ապաշխարութեամբ, միշտ լուսնան արտասուամ զմահինս մարմնոյ իրեանց⁶⁶ զմարմնոց իրեանց զմահինս (հմմտ. Սղմ. Զ 7):

Կոչի եւ քաղաք կենդանւոյն Աստուծոյ, ըստ որում եւ Դաւիթ երգէ. «Գնացք գետոց ուրախ առնեն⁶⁷ զքաղաքն Աստուծոյ» (Սղմ. ԽԵ 5), որ է նշմարտութեամբ եկեղեցի սուրբ, ըստ բանի Տեառն. «Ոչ կարէ քաղաք թափչիլ, որ ի վերայ լերինն⁶⁸ կայցէ» (Մտթ. Ե 14): Եւ ստուգապէս քաղաք Տեառն գաւրութեանց սա, զոր գետն աստուածայինք ռոզգանեն, այսինքն՝ անտարանացն վտակք եւ մարգարէիցն անձրեմ: Յորում գտանի յոլով արուեստագետք հոգեւոր հանճարոյ առաքինութեան գործոց: Եւ հիսունմ նարտարապետք շինողք ի վերայ անշարժելի վիմին ոչ փայտ կամ խոտ, այլ՝ ոսկի եւ քարինս պատուականս, որ մշտնջենատրէ շինուածն, եւ շինողքն⁶⁹ վարձս առցեն զերկնից արհայութին: Գտանին եւ ի սմա վաճառականքն հոգեւորք գնողք

⁶² Ա.Ք պատուէր. ուղղումն ըստ Բառգիրք Տայոց, աշխտ. Հ. Ամայանի, Երևան, 1975, էջ 289 [217]:

⁶³ Ա. խոստմունք

⁶⁴ «պատուէր» ընթերցումը հետևանքն է հեղինակի «Սիւան» անվանը տված խորհրդաբանական ուրույն ստուգաբանության, որը կապված է «պատուէր» ընթերցման հետ

⁶⁵ Ա. մշտնջենատր ինքնակտելի փխ մշտնջենատրին... անփակտելի

⁶⁶ Բ զմարմնոց իրեանց զմահինս

⁶⁷ Ա. առնէ

⁶⁸ Ա. լերին

⁶⁹ Բ շինողք

անյայտ մարգարտին եւ փոխանորդ գունայնութիւն կենցաղոյ ընդ մշտնջենատր բարեացն⁷⁰ եւ զփափկութիւն եւ զեղիւթիւն մարմնոյ արհամարհելով⁷¹ գնեն // (49ա) զաննառ վայելչութիւն⁷²: Ունի եւ պարիսպ անմարտնչելիս⁷³՝ զարէնս եւ զպատուիրանս Աստուծոյ, եւ աշտարակ ամուր՝ զգունդս սրբոց, եւ զաւրս գիշերապահս՝ զանմարմին զաւրութիւնսն:

Իսկ դարձեալ «դաշտ մայրեաց» (Սղմ. ՃԼԱ. 6) զսա անուանէ, յորում ծառք Տեառն տնկեցան, եւ արմաւենիքն սուրբ արմատացան, որք են մարտիրոսացն դաս⁷⁴ եւ սուրբ⁷⁵ կուսանացն ժողով եւ բարեպաշտութեամբ զարդարեալ անձիւնք: Եւ է սա հովիտ արդիւնարար, յորում շուշանն հովտաց եւ ծաղիկն դաշտաց (հմմտ. Երգ Բ 1) ընծիւղեցաւ, եւ հացն կենաց տուաւ, զոր սովեալ բնութիւնս կերակրեալ անմահացաւ⁷⁶, եւ կենաց հոտն բուրեալ յանթառամ ծաղկեցան, շիջոյց զհուր մահուն, որ բոլիւեաց յաւձէն:

Եկեցոյ՛մ այստե՛տեալ յերրորդ գլուխն, եւ ասացոյ՛մ՝ զի՛արդ համակարգ է եւ նման եկեղեցի երկնայնոցն կարգաց ի յերկրի⁷⁷: Եւ արդ, զի երկինք ի յերկրի է⁷⁸ տանար սուրբ, որպէս ցուցանի ի բազում տեղիս: Գիտել արժան է, զի եւ բնակչաց սորա դասք ըստ նոցայն սահմանեցան ի սրբոցն, զոր համառատաբար դնել իրաւացի է: Սակայն զնոսա նախ ի մէջ պարտ է առնուլ, որոց մերս ապացոյց է: Երիս դասս ուսաք զնոսա ի միմեանց անջատեալս կայանամ տեղոյ: Իսկ զերիսն դարձեալ յիրաբանչիւր կայանս զանագանեալ յերիս յերիս ոչ կայանամ, այլ՝ միայն անուամբ եւ պատուով: Արդ, նախ քան զամենեսեան եւ առաջին դասք, որք շուրջ զԱստուծով կան անընդմիջաբար՝ Աթոռն, Սերովբէն եւ Քերովբէն յինքնակատար Աստուածութենէն նոցա լուսատրեալ եւ իմաստնացեալ իջուցանեն աննախանձաբար կամամ զլուսատրութիւն գիտութեան եւ զշնորհսն ի խոնարհագոյն դասս՝ կցորդ արարեալ զնոսա իրեանց գիտութեան: Երկրորդ՝ զկնի սոցա դաս. Տէրու-

⁷⁰ Բ մշտնջենատրութեանցն *փ/ս* մշտնջենատր բարեացն

⁷¹ Բ զփափկութիւն մարմնոյ արհամարհելով եւ զեղիւթիւն *փ/ս* զփափկութիւն... արհամարհելով:

⁷² Ակնարկում է ավետարանական հետևյալ տեղիւն. «Իարձեալ նման է արայութիւն երկնից առն վանառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վանատեաց զամենայն, զոր ինչ ունէր, եւ գնեաց զայն մարգարիտ». Մտք. ԻԳ 45-46:

⁷³ Բ անմարտնչելի

⁷⁴ Բ խումբք

⁷⁵ Բ *չ/բ*

⁷⁶ Ակնարկում է ս. Հաղորդոյթյան խորհուրդը:

⁷⁷ Բ յերկրի կարգաց. *ուղղված համարակալումով*

⁷⁸ Բ յերկրէ *փ/ս* յերկրի է

թիւնք, Զարութիւնք, Իշխանութիւնք⁷⁹, որք յառեալ լուսոյ գիտութիւն ի վեհագունիցն, ըստ չափու գարութեանց իւրեանց վայելեալ, տան յես կրտեսագոյնսն: Երրորդ գոյով յետ նոցա եւ վերջին դաս. Պետութիւնք, Հրեշտակապետք եւ Հրեշտակք, առ որս իջեալ լուսատրութիւն ի նախակացելոցն ի նոսին նահանջի եւ⁸⁰ հանգչի: Եւ այսպէս // (49բ) ի ձեռն միմեանց միջնորդութեամբն ամբառնան եւ յետինքն ի գիտութիւն Աստուածութեան, ըստ կարի ընդունելութեան, որով եւ կատարեալք լինին եւ անուանին: Իսկ յետ նոցա քահանայականս կարգաց ամենառատ բարեբարութիւն կամեցաւ զմարդն հաղորդեցուցանել այնպիսի կարգաց եւ շնորհաց, որպէս զի եւ զմեզ իւր գիտութեան ստացի հաղորդս, եւ զարդարեցէ փառացն շնորհամք, ուսոյց ի ձեռն վերնոյն խորհրդագգած գներին եկեղեցի այնպէս յարինել՝ յերիս դասս եւ յինն իշխանութիւնս պատուոյ եւ անուանց: Արդ, տեսցես զսեղանն պատկեր Աստուծոյ եւ զբեմն տեղի նմին ի տեղի իսկութեան Աստուծոյ շուրջ զնովաւ դասակարգէ բարեզարդութիւն՝ զեպիսկոպոսապետս, զեպիսկոպոսս եւ զքահանայս, որք թէպէտ եւ անուամբ զանագանին եւ իշխանութեամբ, սակայն ի դաս քահանային հաւասարապէս կալ շուրջ զսեղանովն եւ անընդմիջաբար խաւսիլ ընդ նմին խորհրդական աղապիւք: Եւ ի նմանէ ընկալեալ զլուսափայլն գիտութիւն իջուցանեն բարեյաւածար կամամք ի խոնարհագոյն դասն, այսինքն՝ զխաղաղութիւն եւ զհաղորդութիւն եւ զայլ քահանայական կատարմունքն: Երկրորդ, յետ նոցա դաս, անջրպետութեամբ բեմին որոշեալ սարկաւագունք եւ կիսասարկաւագունք եւ սաղմոսերգով լցեալք⁸¹ ի նոցա շնորհացն, հեղու յես յետինսն զնոյնն՝ ոմն զբարոզութիւն վարդապետութեան, ոմն զընթերցողութիւն, այլ ոմն սաղմոսերգութեամբ զնոսա լուսատրեալ: Իսկ վերջին դաս կրաւնատրացն, ժողովրդեանն եւ երախայիցն զանագանութիւն, ընկալեալ ի սոցանէ զշնորհ գիտութեան իմաստիցն, ըստ իւրաքանչիւր չափոյ լուսատրին եւ առ ինքեանս զնոյն նահանջեն: Արդ, այսպիսին աստուածաւանդ կարգամք զարդարեալ է մերս եկեղեցի երկնայնոցն եկեղեցւոյ համատեսակ՝ զաստուածատեսակութիւն նոցա մարմնական մասամբք նկարագրեալ: Ընդ որ հիացեալ մարգարէն Դաւիթ ասէ. «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո եւ զտեղի յարկի փառաց քոց»:

79 Ա. Իշխանութիւնք, Զարութիւնք. *Տերթականութիւնն ուղղված համարակալումով*

80 Ա. չիք

81 Ա. լցեալ

HAKOB KYOSEYAN

**TIRATUR KILIKETS'I'S SERMON TO THE CHURCH, LORD,
I HAVE LOVED THE HABITATION OF YOUR HOUSE,
AND THE PLACE WHERE YOUR HONOUR DWELLETH**

Key words: Theology, ecclesiology, homilies, house, habitation, scriptural exegesis, Upper Room, church, world, altar, revelation, celestial hierarchy.

The 14th-century author Tiratur Kilikeci was a student at Gladzor University and studied under the renowned Esai Nch'ets'i. He wrote many homilies, including the *Sermon to the Church, LORD, I have loved the habitation of your house, and the place where your honour dwelleth* (Ps. 25:8), published in the present article. Following the traditions of his university, Tiratur Vardapet applied a philological-lexical method of studying phenomena. Based on this approach, he identified the symbolic features of the correlative fields "Church – world, Church – man, Church – heaven." This discussion holds significant importance for our conception of Armenian medieval ecclesiological thought.

АКОП КЕОСЕЯН

**ЦЕРКОВНАЯ ПРОПОВЕДЬ ТИРАТУРА КИЛИКЕЦИ, ГЛАСЯЩАЯ!
«ГОСПОДИ! ВОЗЛЮБИЛ Я ОБИТЕЛЬ ДОМА ТВОЕГО
И МЕСТО ЖИЛИЩА СЛАВЫ ТВОЕЙ»**

Ключевые слова: Автор, богослов, гомилии, эпитафия, дом, обитель, толкование, место жилища, церковь, мир, алтарь, откровение, небесная иерархия.

Автор XIV века Тиратур Киликеци был одним из воспитанников Гладзорского университета, учеником великого Есаи Нчеци. Его перу принадлежит множество гомилий, среди которых публикуемая нами (на Пс. 25:8) представляет особый интерес. Верный ученым традициям своего университета, вардапет Тиратур применяет филологический метод изучения явлений. Он выявляет символические особенности корреляции «Церковь = мир, Церковь = человек, Церковь = небо». Гомилия имеет важное значение для изучения армянской средневековой экклезиологической мысли.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գագիկ Դանիելյան

Կիրիկյան Հայաստանն Իզգ ալ-Դին իբն Շադգադի երկերում
(աղբյուրագիտական ներածություն)..... 5

Վահե Թորոսյան

Ֆրանսիական հետքեր Կիրիկիայի հայոց արքաների թագադրման ձեսում..... 32

Աշոտ Սարգսյան

Հայոց դարձի երկրորդ փուլը. Հիմնական քաղաքական
օրակարգը սպասարկող ծրագիրը 48

Օլգա Վարդապարյան

Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան»
աշխատությունը և Մխիթար Գոշի առակները (ոուսերեն)..... 74

Հասմիկ Իրիցյան

Դավիթ եպս. Գեղամեցին գրի՞չ, թե՞ նոր սքանչելագործ
միևնույն ձեռագրում (ՄՄ 3812, Հայսմավուրք)..... 94

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Կարեն Մաթևոսյան

Դլաձորի համալսարանը և Վերին Նորավանքի դպրոցը 110

Թամարա Մինասյան

Գրիչ և մանրանկարիչ Մխիթար Անեցու կյանքն ու
ձեռագրական ժառանգությունը 133

Լուսինե Թումանյան

Արտամետ քաղաքի գրչության կենտրոնը 146

Գոհար Չատյան

Դրիմի նշանավոր գրիչ Նատերի՝ ընտանեկան կարևոր
մի գրվագի ճշգրտման փորձ 158

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կարինե Մոսիկյան

Թանկարժեք քարերը և դրանց բուժական
հատկությունները ըստ միջնադարյան աղբյուրների..... 170

Գայանե Սահրադյան

18-րդ դարի հայերեն օտարապատիճը (ՄՄ 372)
և արևելյան բժշկական ձեռագրային ավանդույթը 198

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Հակոբ Քյոսեյան**

Տիրատուր Կիլիկեցու Քարոզ եկեղեցույ, որ ասէ «Տէր, սիրեցի
զվայելչութիւն տան քո եւ զտեղի յարկի փառաց քոց» ճառը..... 208

Միհրան Ա. Մինասեան

Երկու անտիպ փաստաթուղթ՝ հաշկավանքի եւ
Կարնոյ գիւղերու ու անոնց եկեղեցիներու մասին 227

Ռուզան Պողոսյան

«Բանք իմաստասիրաց աւգտակարք եւ պիտանացուք» 250

Գոհար Մուրադյան

«Բանք իմաստասիրաց» ժողովածուի հունարեն աղբյուրը 278

Առեկ Աբարյան

Առաքել Սյունեցու՝ Տյառնընդառաջի, Ծաղկազարդի,
Հարուխյան և Վարդանանց սրբերին նվիրված անտիպ տաղերը 313

Տ. Շահե Քահանա Հայրապետյան

Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի մի քարոզ 323

ԳՐԱԵՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**Ազատ Բոզոյան, Զարուհի Հակոբյան**

Գևորգ Դազարյան, Ուղղափառ հայք, Երևան, 2024, 241 էջ 336

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների
ձևավորմանը վերաբերող պահանջներ 344

CONTENTS

HISTORY AND PHILOLOGY

Gagik Danielyan

Cilician Armenia in the Works of ʿIzz al-Dīn ibn Shaddād
(a Critical Introduction)5

Vahe Torosyan

French Traces in the Coronation Ordo of the Armenian Kingdom of Cilicia..... 32

Ashot Sargsyan

The Second Phase of the Christianisation of Armenia:
A Program Serving a Fundamental Political Agenda48

Olga Vardazaryan

Basil of Caesarea's Hexaameron and the Parables of Mkhit'ar Gosh..... 74

Hasmik Iritsyan

Bishop David Geghamets'i as a Scribe or a New Wonder-worker
in the Same Manuscript? (Ms M3812, Synaxarium).....94

MANUSCRIPT CULTURE

Karen Matevosyan

Gladzor University and the School of Verin (Upper) Noravank' Monastery..... 110

Tamara Minasyan

The Life and Manuscript Legacy of the Scribe and Miniaturist Mkhit'ar Anets'i.....133

Lusine Tumanyan

The Scriptorium of Artamet.....146

Gohar Chatyan

An Attempt to Clarify an Important Family Episode of the
Famous Crimean Scribe Nater.....158

NATURAL SCIENCES

Karine Mosikyan

Gemstones and Their Medicinal Properties According to Medieval Sources.....170

Gayane Sahradyan

A 18th Century Armenian Pharmacopoeia Akhrabadin (M 372)
and The Eastern Medical Manuscript Tradition.....198

PUBLICATIONS

Hakob Kyoseyan

Tiratur Kilikets'i's *Sermon to the Church* "LORD, I have loved the habitation of your house, and the place where your honour dwelleth" 208

Mihran A. Minasian

Two Previously Unpublished Documents on the Khachgavank Monastery, Villages of Garin (Erzeroum) and Their Churches 227

Ruzan Poghosyan

"Useful and Beneficial Sayings of Philosophers" 250

Gohar Muradyan

The Greek Source of the Sayings of the Philosophers 278

Arevik Arabyan

Unpublished Odes (Taghs) of Aṙak'el Siwnets'i Dedicated to the Feasts of Candlemas, Palm Sunday, Easter, and the Saint Vardanids 313

Fr. Shahe Hayrapetyan

A Sermon by Catholicos Simēon Erevants'i 323

BOOK REVIEW

Azat Bozoyan, Zaruhi Hakobyan

Gevorg Kazaryan, *Orthodox Armenians*, Yerevan, 2024, 241 p. 336

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ФИЛОЛОГИЯ

Гагик Даниелян

Киликийская Армения в сочинениях Изз Ад-Дина ибн Шаддада
(историографическое введение)..... 5

Ваэ Торосян

Французский след в коронационном ритуале Армянского
Киликийского царства..... 32

Ашот Саргсян

Второй этап обращения армян в христианство: программа, обслуживающая
основную политическую повестку..... 48

Ольга Вардазарян

«Шестоднев» Василия Кесарийского и притчи Мхитара Гоша..... 74

Асмик Ирицян

Епископ Давид Гегамеци как писец или новый чудотворец в одной и той же
рукописи? (№ 3812 из собрания Матенадарана, Синаксарий / Айсмавурк)..... 94

РУКОПИСНАЯ КУЛЬТУРА

Карен Матевосян

Университет Гладзор и школа монастыря Верин (Верхний) Нораванк..... 110

Тамара Минасян

Жизнь и рукописное наследие писца и миниатюриста Мхитара Анеци..... 133

Лусине Туманян

Скрипторий города Артамет..... 146

Гоар Чатян

Попытка уточнения важного семейного эпизода известного
крымского писца Натера..... 158

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Карине Мосикян

Драгоценные камни и их целебные свойства по
средневековым источникам..... 170

Гаяне Сахрадян

Армянская фармакопея *ахрабадин* XVIII века (рукопись М372)
в традиции восточных медицинских рукописей.....198

ПУБЛИКАЦИИ**Акоп Кеосеян**

«Церковная проповедь Тиратура Киликеци, гласящая Господи!
Возлюбил я обитель дома Твоего и место жилища славы Твоей».....208

Мигран Минасян

Два ранее не публиковавшихся документа о Хачкаванке и
деревнях Карина (Эрзерум).....227

Рузан Погосян

«Полезные и поучительные изречения философов».....250

Гоар Мурадян

Греческий источник древнеармянских «Изречений философов».....278

Аревик Арабян

Неизданные стихи Аракела Сюнеци о Сретении Господнем, Вербном
воскресении, воскресении Христа и посвященные Святым Варданидам.....313

Священник Шагэ Айрапетян

Проповедь католикоса Симеона Ереванци.....323

РЕЦЕНЗИЯ**Азат Бозоян, Заруи Акобян**

Геворг Казарян, *Православные армяне*, Ереван, 2024, 241 с.....336

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 38

BULLETIN OF MATENADARAN

Volume 38

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 38

Ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Ծնունդ, ծաղկող՝ Մխիթար Անեցի, Ավետարան, 14-րդ.դ, ՄՄ 7740:
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Տեխնիկական խմբագիր՝ Մարիամ Բրուտյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Ձափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 22, տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի

ինստիտուտի հրատարակչություն, Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/